ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԼՐԱԳԻՐ

ԿԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՒԵՒՏՐԱԿԱՆ·

Յոյժ անօրդուածն տարագրութիւնը ընդունելոյ է ֆրէնքլէնդ մէջ Հրատարակչի մօտ, և գրասենեակ Պարո՛ն Հ. Ե. Հ. Հնձիճեանցի գրատուն ֆէյ, իսկ տարիշ տաղանդերու Պատուելի Հր. Գաբրիէլեան մօտ։

Լրագիրը շաբաթը մէյ անգամ լոյս կ'ընծայուի ամէն շաբաթ օր, և պարեկան գինն է մէյ մը ֆլորինով կամ ութ ղրուշով։

ԱՌԱՋԻՆ

Ով որ ուզենայ վաճառականութեան կամ ուրիշ գործի վերաբերեալ յայտարարութիւն տալ լրագրիս մէջ, ամէն 4 տառէ համար կը վճարէ 1 կոպէկ արծաթ։

ՏԱՐԻ

ՀԱՏՈՐ 33 ՕԳՈՒՍՏՈՍԻ 16 1853 Ա.ՄԻ

ՕՐԻՆՈՒՐԱՆԱՆ ԼՈՒՐԵՐ·

Կոլխոեան 4ծէ ամ ԸՆԹՑՔ։ Յունիսի ամսի երկրորդ կիսուն Կուբանի այն կողմը եկած լեռնականները բոլոր ժամանակը անց կացուին անդորձութեամբ, միայն երկրագործները փոքր թարմունեղ երեւեցան սովորաբար Կովկասեան գծի ամէն զանազան տեղերումը, բայց ոչ մի տեղ կարացին բան յառաջ տանել։

Կոստանդինովեան օտրեադումն ամրոյն շինութեան գործքերն շարունակվում են անխափան և յաջողութեամբ։ Ընդ 13 ին օտրեադի գլխաւոր պօդպօլկովնիկ Լեվաշեվն խնամալով թէ Գրեկորկեան ծովածոցը եկան երեք մակոյկ արգելուած ապրանքի, այն օրվայ երեկոյին մուտ ծովը 200 մարդով ,, Լիս ,, և Պսեզուապսէ ,, նաւակներով։ ,,Պսեզուապսէ ,, նաւակը վնասվելու պատճառաւ յետ ուղարկուեցաւ Կոստանդինովկի ամրոցն, իսկ ,, Լիսը ,, 14 ի լուսադեմին մօտ գնալով Գրեկորկ ջուր ծովածոյին՝ տեսաւ երկու մակոյկ դուրս եկած թիավարութեամբ, որք շուտով գերի ընկան նրանց մէջը եղած 18 մարդով։ Գերի արած երկու մակոյկների բեռն էր զանազան ապրանք լեռնականաց, բաւական հրացաններ (Թուանք) Թրեր և վառօդ։ Մակոյկները դուրս քաշելով՝ ,, Լիսը ,, մտաւ Գրեկորկ ծովածոյի մէջ, ուր գտաւ երրորդ մակոյկին՝ դուրս բերած ափը, լեռնականները հետաքրքրեցան բաւական Թուով, և փութալով հին ամրոյն վերատակներումը սկսեցին հրացանները գցել ,, Լիսի ,, և ափվակի մեծ նաւակների վրայ, սակայն պօդպօլկովնիկ Լեվաշեվն ոչնչացնելով մակոյկը Թնդանօթի կրակով յաջողութեամբ յետ դարձաւ Կոստանդինովակի ամրոցը առանց կորուստի, և բերեց իւր հետ երկու բռնած մակոյկները։

Ընդհանրի օտրեադումն։ Պօլկովնիկ Վորկնն՝ որ յունիսի 20 ին գնացել էր զօրքով բերելու Կուբանից պաշար և պատրաստելով շինութեանց նիւթեր՝ կրկին պատահեցաւ Թշնամեաց հետ, ուրկից յետ դառնալու ժամանակը, որ և յաջողութեամբ կատարեց պօլկովնիկ Վոբենցն, և ոչնչացրուց երկու ապստամբ աուլներ։ Լեռնականների կորուստը մեծ էր և Թողին մեր ձեռքումը մէկ սպանուած և 5 ձի, մեր կողմից վերաւորվեցան 6 զինուորք։

Վասկոպսկի օտրեադումը հանդիստ շարունակվեցան շինութիւնքն, անոտառի կտրելն և խոտի հնձելն. Թշնամին ոչ մի տեղ չերևեցաւ, բայց տրամիհետև հաստատուեցաւ՝ թէ Ադաձխեները միտք ունին վրայ տալ Լաբինսկի գծի վրայ, ուստի Վասկոպսկի օտրեադի գլխաւոր պօլկովնիկ Գինեն՝ Թշնամեացը յետ դարձրու այդ դիտաւորութենէն, լաւ համարեց խառովութիւն գցել նրանց սեպհական տներումը։ Ընդ մեջով յունիսի 27 ին պօդպօլկովնիկ Խալուեֆն 700 զազախով, փամիրզա ահմէդ (բակեանի) զօրքի մէկ մասնով և 100 մինգրելով, անց կացաւ Սալիտակ գետը, վրա տուաւ վերեւից Կուրջինսկ հովտի տարածութեան վրայ, այնպէս շտապով և անակնկալելի, որ կարողացաւ յափշտակել Թշնամիներից ողջ հօտը 493 հատ տաւար և 10 ձի։ Թիֆլիսեցի լեռնականները սատկութեամբ ընկան քամակից յետ դառնալու ժամանակը, սակայն զազախները յաջողակ գիւղայ գցելով կանգնացրին Թշնամեացը, և տարը առաջ արին բանակը։

Հրատարակ ՀԱՅՈՑՆ ՂԱՐԱ ԼՈՒՀԱՒԱՆ։

Յուլիսի 22, յամի 1858։ Օգտակար Տառապութեանց և բարի խղճմտանաց համար՝ զորս Թիֆլիզեցի քաղաքացի պարոն Ալեքսի Ղազարեանն ցոյց տուաւ Քննութեական կառավարութեանն գանազան պաշարե-

ղէնք, նիւթեղէնք և գործիքներ հաղորդելուն ըստ կա-
պակցութեան, 1852—1857 տարիքների միջոցումն գան-
ձարանի համար շահաւէտ գնելով, այնուամենայնիւ չգոհելով
այն դժուարութիւնքն՝ որք պատահէին այս աշխարհի
պատերազմական հանգամանաց մասին, ես հետևելով մեր
ձառագային Արեծաւորին՝ որ այս մասին վկայութիւն կ
տալէ, նշանակում եմ նրան ըստ իշխանութեանն՝ որ
առեալ է լինի ՚ի ԿԱՅՍԵՐԻՆ արձանի մեզալ
այսու մակագրով ,, Ջերմեռանդութեան համար'' որ շը-
լընչին քաշ անի Յովհաննէսի Ժապաւենով (լինաւ)։

Ընդհանուր առաքագրեց · Գլխաւոր Հրամանա-
տար Գ. Ներսէս Աղբիւրատան Կենաց Բարեա-
պետին։

ԸՆԴՀԱՑ ԴԱՐԱՁԱՆՔ

Յայսկոյսվոլիտաս մագրատանց և մագրատանց կառավարու-
թեան և Ընդհանրէիս միջոցի Սուխումղալեան նահանգի
1858 թուի մայիսին։

Ընկել են բանակակիզին գործուածք 126635 ման.
13 կոպէկի · բանպակ 21178 մանկեղի 50 կոպէկի ·
ապրշումակին գործուածք 28,901 ման. 20 կոպ. բրդե-
ղէնք 8,180 ման. 30 կոպ · հում ապրշում 5,090
ման. շաքար 44,125 ման. չոր միրգ 55,803 ման ·
65 կոպ. նիւթք բժշկական դեղօրկից 9,755 ման. 50
կոպ · թամպաքու 9,564 ման. 45 կոպ. լամիչք 8,913
ման. վառուկ կահու կարասիք 18,245 ման. 40 կոպ.
ղամպան տուաք 53,484 ման. ուրիշ ապրանքներք 65,
148 ման. 90 կոպ. Գումարն է 453,025 մ. 3 կ։
Գուս են տարել հում ապրշում 14,725 ման. բրդե-
ղէն գործուածք 4,110մ. կաշի և կաշեղէնք 38952 մ.
հրահալեղիք և հրահալեցուց շինուածք 24,074 ման ·
30 կոպ. փայտաշէն ապրանք 14,254 ման. ուրիշ ապ-
րանքներք 79,001 ման. 50 կ · Գումարն է 176,117
ման · Յերկրագործական և տնտեսական ապրանքներից բաժ է
տուն ելել 62,996 ման. 60 և մին չեռ. կոպ։ Փող
են դուս տարել 202,563 մ. 70 կոպ։ 228 կառաւանք
են եկել, և 110 դուրս են գնացել։ Նաւեր են եկել
76, գնացել են 55։

Օդեսսա, յունիսի 25 · Երեկ ժամ 4, կէսօրից
յետոյ մտաւ այս քաղաքը յանկարծական Հանդարտհաս ՚ի
Գալացին անյանկելով ՚ի Ալեքսոպոլ, Նորին ազգայա-
կան Ս. Հոգեւորութեան Թագաւորական Ընդերա Պրուսիոյ, յետ
պատրաստուելոյ դեմ գնալոյ նրան քաղաքագրան մօտ,
Բարձրութեան նորա ածաւ նորա Հետ պատրաստած
լիմանն՝ որ է ՚ի տան պարոն Պաոսին կառուցուղն
զարշոն կենտրոնին Պրուսոյ՝ Նիկաեբրինեան Հը-
բապարակի մէջ, ուր արդէն սպասէր Բարձրութեան նորա
Պրադեան հետևակ զօրագնդի Գ. Ներսէս — Աղբիւրատա
Լ Հղեմի պատուագիր պահակախումբն։

Յունիսի 25 ին Նորին Ընդհայական Բարձրութիւն
Ընդհայորդին Ընդերա Պրուսոյ տեսութիւն առնելով
մեր քաղաքին և 23 ին գնալով ՚ի Թեատրն՝ յերեկոյին
Ներսոնեան քաղաքագունդն գնաց Ալեքսոպոլ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ։

Փարիզ · Մագազակարքեղը լաւ ստացուեցաւ, թէ
են տեղ երկրագիրն մեռցրին մին Ֆրանցուզի նաւի բոլոր
նաւազդներն և նաւը սեփականեցին իրանց։

Լոնդոն · Ներքին Պարլամենտի դումարման մէջ՝
որ եղև յուլիսի 23 ին ալ · Ֆիցջերալդն · ըստ Հարցմանն
արտերալ նոմա Ջ Լեդեան անգլից Համար՝ պատասխանեց
դրեթէ նոյնպէս մի և նոյն՝ ինչ որ Լ օրդ Պալմերսէրին
վերին պարլամենտում · յաւելուլ՝ թէ Սուլթանն մար-
դագլուխ 1000 պիատտր թոշակ (50 ման· արծ·) նշա-
նակեց Ջ Եդեի մէջ բոլոր նեղութիւն քաշածներին, իսկ
Ինկլիզի և Ֆրանցուզների հիւպատոսաց ամեն մեկի ըն-
տանեացն 400 ֆ· ստեր· (2500 ման· արծաթ)։

— Լոնդոնի մի քանի լրագիրներն անվայելուչ խօս-
քեր խոսեցան Նապօլէոնի արձանի մասին, որ Շերբուր-
գում կանգնացրել են, թէ Կայսեր մատը Ընդդէմ ծո-
վերն է ցոյց տալի։ Այս չլսած դիւրագրգռութիւն հան-
դարտացնելու մասին հրամայեցաւ, որ այժմեան փոխա-
բանութիւն առնել կիսադարձութիւն և փոխանակ դէպ ՚ի
արևելք մեկ տալոյ, այսկերն Ընդդէմ, արձանի երեսը
շուռ տալ դէպ ՚ի հաւակայանը և հիւսիսային արևելքը։
Այս ուրեմն Ընդդիմացիք կարեն զալ գնալ Շերբուրգ
չհամարելով՝ թէ Նապօլէոնի մատը սպառնում է իրանց։

(Վօս) Կաթոլիկոս եպիսկոպոսն՝ որ ՚ի Դուբլոյցօ
(Ամերիկա) պահանջեց Ընդդէմ—վաշտ գաւառապետին,
որ Յիսն քրիստոնեից հրամայէ չսպանել սրբոյն Յովհան-
նու եկեղեցին։ փաշային այս խնդիրս յանձնեց Յունաց
հաստատութեանն, և նոքա պատասխան տուին, թէ սրբ-
բոյն Յովհաննու վանքն և եկեղեցին շինել են Նեմ-
սեան ցեղի Սերբիոյ Թագաւորներն ուղղափառաց համար,
որ և եղած է միշտ նոցա ձեռներին Սուլթան Մեհմետ
հաստատութեամբն։ Նա այս պատճառաւ հաստատու-
թիւնն կպահանջէ, որ իւր սեփականը իրան յետ դար-
ձընեն։ Գնա փաշայի վճիռը դուս չէ եկել։

— Իշխանուհի Լաուզ դ' Օվէրն՝ որ Նրուա-
զեմոմը շինում էր Ալիճի Կուանայ ամուսնով վանք և-
կաս փարիզ։ Յայտնի է, որ նա մին հարուստ գործա-
տանատիրոջ այրի էր, որ նրան 8 միլիոն ժառանգութիւն
Թողուց։ Նրա հետ պատահեց աղքատ իշխանն Լաուզ
դ'Օվէրն, որ և պատկից յետոյ քաշուեց մին առան-
ձին տեղ։

Թիմես լրագրի մէջ գրում են, թէ բացի Ընդհան-
չին և Ֆրանսիսկին պահանջում են Տաճկաստանից և
ուրիշ տերութիւնք բանակութիւն, որոց հպատակները
վնաս կրեցին Ջ Եդեի ապստամբեան մէջ։ Բայց Տաճկաս-
տանը պատասխանեց նրանց միայն, թէ ամենայն վնաս
կրողները կքատանան միակերպ վարձատրութիւն։

Ս. Ներսէս Պարլամենտը վախճանաբար հաստատեց առա-
ջարկութիւնը արևելեան Հնդկաստանի կառավարութեան
վերայ։ Դարձում են, թէ Պարլամենտը կը փակուի օգոս-
տոսի 2 ին։ Ատորնէ Պարլամենտում Պ. դ'Իզրայելի
յայտնեց, թէ նախարարութիւնը հիմիկուց շինում է
այժմ գաշինքի օրինակը, որ կառաջարկուի Ամերիկա-
Միացեալ Նահանգներին, յաղագս միջոցաց ընդդէմ ա-
բատարձութեանց Ամերիկացոց նաւազբօշին, ուրեմն Հարց-

մանքն վերահաստատեան իրաւունքի համար դեռ կատարեալ չէ վերջացել, և Մխայեալ Նահանգները կը լինին բաւական այն ժամանակը միայն, երբ Ընդհանուր կառավարութիւնը Թղթով կը հրաժարվի այդ իրաւունքից, որ շատ ծանր է ամէն ազգայ համար։

Ալէքսանդրիայեն (Եգիպտոս) գրում են, թէ այն տեղ փորձեր կլան խռովելու մահմետականներին ընդդէմ քրիստոնեից։ Բայց Եգիպտոսի իշխանութիւնը բռնելին խռովարարների գլխաւորներին և հրամայեցին զօքին պատրաստ լինիլ։ Ցայս ոմանք, թէ այս եղանակը բաւական կը լինի։

Ընդհանուր կառավարութիւնը իսկայ ազատ իւր բոլոր հպատակներին և գործակալներին արևելեան Հնդկաստանի ընկերութեան, թէ ապագայ ժամանակումը բոլոր զօրքը կառավարվին Հնդկաստանի Եգիպտոսի վրայով։

Այս օրերումը Հնդոնեմի մին աղքատ Կռնտոխրի մօտ քաղաքի գտած կտրեց մին փռնտոր, որ իրան բերնեն բանտ գցեն և չթողնեն, որ տանտիրոջ լինի։ Այս Հնդկաստանումը ծառայել է 18 տարի։ Հինգ անգամ է եղել մեծամեծ (ընդհանրական) կռուների մէջ։ Ինքն է 46 տարոց, և ծառայութիւնը շարունակելու համար անընդունակ է։ Բայց Ընդհանուր օրէնքով նա միայն 50 տարին կարող չէ խնդրել Թոշակ (պենսիա) կամ մնալ վերաբերածների տունը։

Ընթերք. Յունիսի 3. (Յուն) Երեկ եկաւ ի Պերպ Ընդհանուր զինուորական շոգենաւն Վանդիայ կողզացը և յայտնեց Սամի փաշի էն տեղ գնալն։ Հա նոր խնդրութիւնք, զոր Վանդիա քրիստոնեայքն տուին հիւպատոսին (Կօնսուլներին)։

,, Մենք կրկին բողբոջում ենք ձեր առաջին արեան արբու և ամէհալից բռնութեանց դէմ, զորս անդադար կրում ենք Տաճիկներից։ Մինչև յայժմ տանում էինք մեք լռութեամբ։ Այժմ խնդրում ենք ձեզանից, որ որքան կարելի է շատով ներկայացնէք նրանց Խարբերդի Վրանը, ձեր դեսպանութեան ձեռնով կատարելու պօլսում, որ նա մեր չարչարանքը վերջացնի։ 1) Քօսքերը քրիստոնեից տանեցին հարատային գառառումը առանց մին ամենափոքր պատճառի առ այն։ 2) Վրանը նոյն գառառի կառավարը խայտառակեցին և խեղդամահ արին կողոպտելով առաջ նորա ամենայն կայքը։ 3) Կողոպտեցին նաև բոլոր իրանց պատահածները։ 4) Նոքա տատիկ կատարմահ արին Ալիսպեան Եպիսկոպոսին, որ կամենում էր Թուք գնալ անահ տեղումը։ Կանգնեցնելով նորան Ճանապարհումը հանելով նորա զգեստը և լցնելով վողերը՝ մէրուքի մազերը փետեցին գլուխ տալին և մեռցրին նորան, անընդատեղն Թողնելով նոյն ոզորմելի գրութեան մէջ։ 5) Նոքա ամէն տեղ այրեցին և կրատեցին Եկեղեցեաց և այլ պատոյ ծառերը։ 6) Նոքա ամենայն տեղ քրիստոնէից արտերը հնձեցին, և ուր որ չկարացին, հնտեղ բոլորը փչացրին։ 7) Տղամարդոց ձեռնեն ու ոտներն կապելով՝ նորանց մօտ կնանոնց ու աղջկերանցը խայտառակեցին։ 8) Մուրդ Դերորդի Վանքիցը յափշտակեցին 17,000 պիաստր նազդ փող, և 20,000 Թանզաթին զատեր։ 9) Հրացանաց զննդատներով երկու եկեղեցւոյ դռներըը կոտրատեցին, որոց մէջ ջարդեցին պատկերներ, կանթեղներ և սրբազան անօթք։ դերեզմաններից հանեցին մեռելոց մարմինքը, և գիւղերի երիտասարդներին ծակոտեցին նրանց։ Մեք ատաւիկ վերաբերվեցանք ոչ քրիստոնեի պատճառին՝ որ նա ապտնել էր իրան անպատիւ անող Սոդոմացի Տաճկին, այլ գազանութեամբն՝ որով նորա լեշը Թուկ կապած քաշ քաշ տալին դեռևի վերայ։ Մեք էլ չենք կարող այսպիսի արարմանը Հաւանիլ։ Յուսահատութիւն հոգւով պաղատում ենք ձեզ, որ մեր չարչարանքը ներկայացնէք Խարբերդոյն Վրանին, որ Սուլթանը մեր վերայ ցաւի, խեղճ գայ'' (սքանչից յետ ձեռք են քաշել)։

Վանդիայ կղզեցումը նոր Վատառապեան Սամի փաշայ քրիստոնեայ բնակչաց Սամիսխոումը կարգայ մին Հրատարակութիւն ի պատասխանի քրիստոնեից գանգատացածին՝ զոր Տէրութեանն արել էին։ Բայց որովհետև այս պատասխանայ մէջ շատ գանգատանայ մասին չխշատութիւն չկար և մեղեների համար էլ երկու մարդի պատասխանի են տուել, այս պատճառաւ էլ քրիստոնեայք չէլան շնորհակալ։ Պահանջեցին՝ որ լսվին խաստի — հիւմայունը վախալ։ Ի վերջ տարակուսանաց յետոյ Սամի փաշային տեսանելով վատահ դրութիւնը քրիստոնէից՝ համաձայնեցաւ նոցա պահանջմանց հետ։

— Տուբինեան լրագրումն ծանուցանում են, թէ Սարդինիայ նաւատն՝ որոյ հրամանը էր տուած գնալ Շէրբուրգ, վախճացաւ այս հրամանը և նորա դնացին Վանդիայ քրիստոնէից կղզւոյ մէջ երած քրիստոնէից պաշտպանութիւն անելն։

Յունիսի 24 էն Պօլսից եկած լուրերումն Ջեդդայ մէջ 200 յանցաւոր մարդկանց բռնել են և բանտ են դրել։

Փարիզ. Յունիսի 25. Այսօր ,, Բրետան'' նաւի վերայ տուած Ճաշի ժամանակը բացականչեց Վիկտորիա Թագուհոյ և նորա ընտանեաց առողջութեան համար։ Իւր Ճառումը տատց նա. ,, Խարբերազգ եմ ես, որ կառավարում եմ յայտնի անել ինձ ոչի տուող զգացմունքը։ Յիրաւի Թագուհոյ Շէրբուրգ գալը ծանապարհական նաւով խոստմէ արդէն իւր համար և ապացուցանում է, թէ Թշնամական կիրքերը օրք Թշնամական պատահմանութեանց օգնականութիւն են գտել, չկարացին վախճալ ոչ բարեկամութիւնը, որ երկու ազգաց միջ կենում է, ոչ ժողովրդոյ փափագ միանալ ի միջ խաղաղութեան։ Այսն որոյ ես ստուգիւ ներկայում եմ, վի թէ ցանկանան դրգռել Թշնամութիւն՝ անցեալ ժամանակաց կրքերը, յայնժամ նորա կը ոչնչանան ժողովրդոյ ողջամտութեան առաջը, ինչպէս ծուխ ալիք խիսում են ցանկապատերի մօտ, որք առաջին պաշտպանում են Վիկտորիայի բռնութիւնից երկոցունց Թագաւորութեանց պատերազմական նաւերի գումարտակները։ Ընթերցողն Ալբերտ պատասխանեց այս Ճառիս Թագուհոյ անուամբ նոյնպիսի մարտ։

ՆՈՐ ԼՈՒՐԵՐ։

Մեկ քանի անձանց բռնութիւնը Ակնա—Լուինոմն ցոյց են տալիս, թէ Ֆրանսիացիք դեռ ևս ներդործում են գաղանի ընկերութիւնը, այս գործի վնասութիւնը դեռ ևս չյայտնի չէ։ Ասում են, թէ գտել են հարցաքննութեան հետք Ակնա-Լուինի ապստամբների և

Լոսալայսոց մէջ, որք բռնուած են փարիզումն։

Ալիկսօրիա Թագուհին օգոստոսի 4 ին Օսբորնիսը կերթայ Շէրբուրգ, իսկ 6 ին յետ կը դառնայ Այլէթ կղզին։ Խոլոր լուսպիները շատ կամ քիչ անբաւական են այս Հանապարհորդութենէն, մանաւանդ դաւառական լուսպիներն։ Ա՛ոդոնի Ռիչմեվի լուսպիրն Ընքնօմիս ասում է և գայս։

„Ընդհանուր հնարհաւորում է իւր դիտոյս ընդառձակութիւնը նորա Ծովային զօրութեան, իսկ Ֆրանսիայի ահռելի քաղաքավարութեամբ մեծ հոգ ունի իւր պանդխանների ապահովութեան համար՝ որք Ընդհանուն են։ Դատաստանական եղանակը՝ որ մատուցել է Ա՛օրդ Պալմերսթոնը առաջարկութեան կերպով դաշնակցութեան համար՝ երբէք չէր կարող ընդունել Ընդհանուն այնպիսի անբարեհաճութեամբ, եթէ չէր տեսել այս սահմանի մէջ մէկ քաղաքավարութիւն առ Ֆրանսացին Կայսրն։ Իսկ այժմ Ընդհանուն յաւակնութեամբ համոզված է, թէ Ա՛օրդ Դերբին և Ա՛օրդ Պալմերսթոն անում են միևնոյն գործը։ Շէրբուրգի հնարհաւորութիւնը չի ամրացնի քիչ երէ սրտալի դաշը։ Ընդհակառակն յետ աւելորդ մարդասիրութեան պէտք է սպասել սաստիկ հակառակութեան։ Ընդհանումը ոչ որ չէ կարծում ազդել անօգուտ երկիւղ Ֆրանսացւոյ արշաւանքի ձևերից. ոչ որ չէ հաւատում այնպիսի դիտաւորութեանցը, բայց անպատշաճ է, որ Ընդհանուն սակրաղական ազգին տայ իւր դէմ յայտնի նպատ համար, թէ նա այնպէս սպառնալիքը դէմ դառում է հանդիսական ծովի ափը, և այս ամենը նպատ համար է, որ հաւատացնէ Եւրոպային գաշինքի հաստատութեան համար։ Ընհնային բռնի փոխը գաշինքի ամրութեան համար կը թուլացնէ միայն նրան։

(Յունի.) Սարդին Պարլամենտի դումարման մէջ յուլիսի 22 ին Պ. Ակսմոր-Ֆիցվիլլիամ յայտնեց թէ շոգենաւն „Յիկլոպ“ որ գանվում է Ջեղագետմը կը պահանջի, որ յանցաւորներին պատժեն, և թէ մերժողական պատասխանի ստանայ, կսկսի քաղաքը ռմբակոծել։

ԱՌԱՆՈՒՄՆ ԿԱՅԻՑ

1, Գործոյ Ընդհանուր Սուդումն գալ սեպտեմբերի 12 ին 11 ժամին, երեք օրից յետոյ պերետօրժկով պիտի ծախվի աշնիս Ատեփան Ա՛նդրեևովի այգին, որ է Գործոյ դաւառումն Ռուսիս գեղումն և գին է արած 150 մանէթ։ Յանկացողքն կարեն տեսանել այդոյ մանրամասն ցուցակին և բոլոր Թղթերն նոյն սուդումն։

2, Նովոտոյ Ընդհանուր Սուդումն նշանակուած է տօրդ այս օգոստոսի 19 ին ժամ 11 և երեք օրից յետոյ պերետօրժկով պիտի ծախվի Նովոտոյ դաւառի Ինջա Ա՛արաբուլաղ գեղն բնակիչ Ընլսհ—ղուլն—Ընլե — օղլու Թեթի բոյնն, ասպան, և խոտահարքն, գին է արած 155 մանէթ։

ՏՕՐԹԵՐ ՈՒ ՊՕԴՐԱՏԵՂԵՐ

1, Գարբանդու Գուբերսկի Դատաստանումն նշանակուած է սեպտեմբերի 2 ին տօրդ, երեք օրից յետոյ պերետօրժկով, ելնորով տալու Գարբանդու դաւառումը Թազաւորական դուքանները Ալլա և Նէյլուդ, ժամանակով 1859 Թուին մինչև 1865 Թիւը։ Յանկացողները պիտի ունենան օրինաւոր դրաւականներ, ուր կը յայտնեն և պայմաններն։

2, Նոյն Դատաստանումն սեպտեմբերի 3 ին երեք օրից յետոյ պերետօրժկով տրվում է ելնորով Գարբանդու քաղաքի կրճքի և չափի հարկը՝ 1 ին յունվարի 1859 մինչև 1 յուլիսի 1861 ամի։

3, Նոյն Դատաստանումն սեպտեմբերի 3 ին՝ երեք օրից յետոյ պերետօրժկով տրվում է ելնորով Գարբանդու քաղաքի անասնոց մորթելու բաժը սկսած՝ի 1 ին յունվարի 1859 մինչև 1 յուլիսի 1861 ամի։

4, Թագաւորական կայից Ընկսպեդիցիումն կը լինի տօրդ սեպտեմբերի 1 ին երեք օրից յետոյ պերետօրժկով, ելնորով տալու համար եկեղեցական հողերը, որ է Թիֆլիսու գաւառի Ալեխսանդրի գաւառակի Ներքո գեղումը։

Ալերսիշեալ ելնորեք վեր առնուղները պիտի յայտնուին յիշեալ դատաստաններումն դրաւականներով։

заказ. вѣст. № 32.

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

՚ի ճեմ պաղերազին Ա՛արդանոյ յեղանակ վերերդք։

Ա՛ռ Տղուտ գետով զերեսս դաշտին
կալան բազմութիւնք մեր արեայ գնդին,
որք՚ի վառվռուն կրակոտ բոցոյ
խուժեն՚ի դիպել՚ի պահ պարապոյ։

Ընդաղ քան զարծուիս երկնաթռչուն
մրրկեն զկառս՚ի ձախատ կուսոյն.
վառեալ լանջակուռ քաջարին Ա՛արդան
խրախոյս կարգայ՚ի ռազմախոյսեան.

Ա՛ատիցուք յառաջ աներկիւղ սիրով,
և դիցուք՚ի միտս խորհուրդ անվհտով,
զի մեզ երկնաւոր միտն մրցանակք
և անանց կենաց երկայն ժամանակ։ „

Ընդ Ա՛արդանայ քաջ նիզակակից
պետ հանդիսացիր՚ի մարտս վեհից.
նիզակ՚ի ձեռին դիմեաց բոցակնեան
արկ յոխորտ զաղամիք շանթահար վզեան։

Ա՛աղաւեր զօրաց անմահ յիշատակ
վառեր զնոսա համակ անքանակ,
՚ի կրկէս մարտին միսել համարձակ
կամ յաղթել՝ կամ փառաց առնուլ պսակ։

Հայոցն արուեստիւնք՚ի բանակ առաւար
կազմին զվահանս պատնէշ և պատուար.
հապճեպ՚ի սրտի զուարթիք և պատրաստք
սպասեն թէ երբ գոչեն վաղահարք։

Իշխանն Ընդրունեաց ընդ նիզակակցին
յարդարեր Ձախատ զառաջին գնդին.
գնդի երկրորդի թիկն աստի անտի
կազմեին Խորէն և Վահրեւունի։

Ա՛առաջս՚ի ձեռն Ընդսէն կորովեալն
երթորդին յարմար եղանակ կալոյ.
նմին աջակից եառն՚ի մարտի
զգաստանալոն Տաճատ Գնեունի։

Ընդսէս յոյն հանդէս և քաջն Ա՛արդան

յանձին առ ղէոդ չորրորդ պաշտամանն.
Ա՛րդանայ նիկոլ ծարաւին աբեան
զգինոս կալմիր աջով յաղթական։
Ա՛րդան քաջալանջ ՚ի տարաս մարտին
յօրինակ զձիս ցոյց զնւրոյ անձին.
և անդէն գունդ գունդ զօրքն ՚ի միմեանց
վերայ վազեցան զերծի առիւծ անասնոյ։
Օ՛ղիային անցնիւր զօրացն ՚ի խորին,
օցտել և ցրել զաղմուկ դուալարին.
անվեհեր արկեալ զանձինս ՚ի հանդէս,
երբ բացաւ պատա մեկն ասպարէզ։
Պալտնեաց յաղթն քաջարին Ա՛րտակ
յիմաստուն յառեալ գոչէր Հմայեակ
զքաջն երկուան վազվազեալ արագ
ջերմեռանդ սիրով սալ ՚ի պատարագ։
Բազատրին նետք անձուկ առանձուկ
և շառաւիղ զմրրիկս և զվիհաւորուկ.
գիշաքարշ եզեալք ՚ի թաւալգլոր՝
դիտակք զտեղւոյն ընտն խորաձոր։
Ընդ սուրբ երկնայոդ հայկական բազկօք
գործեն հազարիս յորդ արեան առուօք,
և երկաթ անյագ ուտէ զմիս վատաց
զերկիրս հարատեալ ՚ի գոյն հարուած։
՚Ի արտիական դիմման ամբակաց
այն հսկայաթայլ ուժեղ նժոյգաց
խանաքհին բլուրք ՚ի հարթ հաւասար,
հարթիչն դաշտավայրք ՚ի գործ խաղնորաց։
Շոգիւն առաջեաց, նշանաց շաչիւն,
թնդիւն վահանաց, նետից շառաչիւն,
պնդաձիգ հայթմանիք լարից աղեղանց
սլանան ՚ի յօդս ընդ մորդ թաւամանգանց։
Ա՛ն ահելաստաստ արիւնոտ մարտին
քաջացն ընդ քաջաց զայրոյթք զրդռին։
Եռան երկուստեք տագնապաբար հրոյ
հսկայք զհսկայս տալ Հարուկ սրոյ։
Հազար երեսուն և վեց վկայից
զերեցան անուանք դարձուածեան յերկնից
հարատատ մահուամբք մնալ յաւիտեան
կենդանիք կենաց և անմահութեան։
Ա՛ն Հայոց գնդին, այն սրատ պարսն
հոգևոր վառաց եհաս սուրբ գարուն,
աբբուցան արմատք անկոց Վրիստոսի
անապակ գինեօք վրկելոց խաչի։

1858 ապրիլը 15 ՚ի կ··· պոլիս Ղ. Ա. Ղ.

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

ՀՈՐՍ ԵՂԱՆԱԿԻՔ ՏԱՐՒՈՑ

Հայրենասէր Ընթերցողին գործոց և նախաձեռնութեանց։

Հարունակութիւն։

Ա՛յսպէս անելոյա գործքը չինաց Ղամեռն իշխանին, և ահա սկսաւ յանկարծ դալ իշխանն սրդուզութեան և աշխարհէ երջանկութեան, որոյ անունն էր Գաբուն, երիտասարդ զուարթ, քաջառողջ, բարձրահասակ, հարուստ, դիւցազն, ուժեղ. կերպարանքն գեղեցիկ, աչքերն ծով ծով, ունքերն կամարակապ, ձեռքսն լայն ու սպիտակ, շրթունքն բարակ, ատամներն մարգարտաշար, շլինքն ինչպէս մարմարիոնեայ սիւն, հայեցուածքն քաղցր և ժպիտն դէմքի վրայ նկարուած, երեսն կարմիրով լուացեալ, մատներն ինչպէս թափած սպիտակ մեղրամոմ, թշերն կարմիր նռան պէս, դլխին ունէր դրած ծաղկներից հիւսած թագ, հանդերձն կանաչ, վրայում էր անոյշ հոտ և զմայլեցնում էր մարդու քիմքը։ Գաբուն ժամանակին երկիրը վիճակեալ վուեց նորա աչքն տակն դոյն գոյն ծաղիկներ, թռչունքներն քաղցր եղանակով շնորհաւորում էին նրա գալուստը, դառներն ուրախութենէն մայում էին և վեր վեր էին թռչտում նրա հանդէպ։ Այսպիսի հանդիսով նրա տաւ իրան աթոռը, որ ամէն գեղեցիկ տեսակ ծաղիկներից հիւսած էր, և պալատը զանազան քաղցրահոտ թրջուճներով լցեալ էր, ծաղկեայ սիւռոյներով զարդարուած։

Իշխան Ղամեռն իմանալով Գաբունը իշխանի մըտնելը այսպիսի մեծ հանդիսով, որ բոլոր աշխարհն ուրախութենով առաջ դնաց ընդունելու, տասնիկ բարեկացաւ, և ժողովեց իրան զօրքը կռիւ տալու նրա հետ, բայց երբ իմացաւ թէ կառավարիչ Գաբուն ապստամբել է իրան՝ շատ նեղացաւ, վասն որոյ ծածուկ քննութիւն արաւ, տեսաւ որ ուղիղ սնձինք նրա զօրքիցը իրան հնազանդութեան մէջ են, միայն մեծ յոյս ունեցաւ՝ որ յաղթութիւնն իրան կողմն լինի, և սկսաւ պատրաստութիւն տեսնել պատերազմի բանալու, յուսալով միւս աբարածներին, ոսկոյն ամէնքն էլ ապստամբեցան։

Գաբուն 9 ին բաց եկաւ ահաղին պատերազմը։

Գաբու ձոր Թնդում էին. քարահնչիւն ձայնը օդը լցնում էր, երկիրը դղդում էր, երկինքն պատում էր, ջրերը սկսան ուռչել և սառուցներին կոտրատել ու ջարդ ջրդել, որոյ ձայնն անսահմանները Թնդում էին և երկու կողմն էլ կոտրածք էր լինում։

Այս գոռոզ գօշուցը իմանալով Աթեգաին՝ մարիկ տուաւ երկնքից, և տեսաւ իրան հին ծանօթը՝ որ աշխարհքը ստեղծուելու ջորրորդ օրէն ՚ի միասին բնակվում էին մէկ գնդի մէջ և միշտ բարեկամ էին, ուրախացաւ շատ, և որովհետև ինքն էլ շատ էր նեղացած Ղամեռն Իշխանէն՝ իրան զօրութիւնը պակասացնելոյ համար, վասն որոյ ժամանակ գտաւ իւր վրէժը հանելու Գաբուն Իշխանի օգնականութեամբ, ուսոսկ պնդեց սիրտը, լուաց երեսը կամենալ, հագաւ Թագաւորական ծիրանի շորերը, զարդարուած դլխէ դլուխ անգամանդեայ քարերով, որ մարդ չէր կարողանում մէկ տալ, և եթէ մէկը համարձակվում էր աչքերը սիժզացնել նրա դէմ, կասես թէ ամպերիցը փշեր էր դուրս աչքերի մէջ և ծակծկում, դուրս կիւռ պատեէն, մեռն էր գալն նմանութիւնը ամպերի վրայ, և ամպերը ոսկոյ նման կին փայլում, ծիծաղում էր, խնդում էր Գաբուն Իշխանի վրայ, քարկում էր նրան, գրկում էր, համբուրում էր, վուում էր իւր շողը աշխարհքի երեսին, իսկ Ղամեռան վրայ կրակ էր թափում, հրամայում էր ամպերին որ իրան հետ ՚ի միասին կռուելու պատրաստուին։

Իշխան Ղամեռն տեսնելով այս ամենայն պատրաս-

տալ Քրիստոսը երան դեմ, մարդ ուղարկեց Գաբրան իշխանի մօտ այս պատգամով, Թէ Գաբրիէլ, մանուկ իշխան, դու դեռ երեխայ ես, ես քո հասակիդ կնայում եմ, ինչ յետ գալիդը քո տեղը, և ախտս է քո արեգ, որ խոստացայեմ, իմ հասակս ծերացել է կռւի մէջ, քանի որ աշխարհքն ինձ չկարողացաւ դէմ կանգնիլ, ՚ի սկզբանէ աշխարհի հաղթաւոր տարիական լեռները, գետեր, անտառները իմ հրամանիս դէմ չկարացին կանգնիլ, այլ ամէնքն էլ հնազանդվեցան, և եթէ դու Աբեթագին ես յուսացել՝ Թէ նա երան ջերմութենով քեզ պիտի օգնական լինի, ասկայն ես նրա տաքութիւնը կարել եմ, և դեռևի տակն եմ գցել, և այժմ էլ կը հրամայեմ ցրտին և հիւսիսին, որ սառուցի սառը քամիք փչեն, և նրա ելած տաքութիւնն էլ սառեցնեն, իսկ եթէ դու քո երիտասարդութեան խելքին կը հրամայես՝ կը հրամայեմ քեզ, որ ձնի տակն խեղդէ քեզ, ուրեմն յետ գնա քո տեղդ, որ իմ ծերութեան ժամանակս չտեսնեմ քո ապարաղութիւնդ։

Գաբրան իշխանն լսելով այս պատգամն՝ ամենևին չդարկացաւ, այլ իւր պատրաստութեան վրայ էր, և պատասխան ուղարկեց, Թէ բոլոր աշխարհքն քեզանից անընդհակառակ է, ՚ի սպառնալեաց քոց ես ոչինչ երկիւղ չունիմ, եթէ քո իշխանութիւնդ երկարէ, աշխարհքիս վախճան կբերես, ծեր մարդիկ միշտ լինքնահաւան, բազկացօղ և անգութ կը լինին, ուստի լաւ կը լինի որ խոստղութեամբ հեռանաս, քան զի մեր ծերութիւնդ միայն կամենում եմ պատուել, և օրհնութիւնդ ժառանգել, իսկ Թէ ոչ, պատրաստ եմ պատերազմելու քեզ հետ։

Աբեգանն սկսաւ քիչ քիչ ջերմանալ ասելայնել, ամպերն երբեմն անձրև և երբեմն ձիւն էին անում, քամին սկսաւ փոքր առ փչել և լեռները ու դաշտերը ձիւներն հալել. տեսաւ Ձմեռն Թէ իւր գործքը վատ է գնում, կրկին դես պան ուղարկեց Գաբրանքի մօտ, որ խոստացութեամբ մընան, ու ՚ի միասին կառավարեն աշխարհքը, և երան արդարացնելու և իրաւունքը հաստատելու համար այս խօսքը ասպատրեց, ,, Ով Գաբրան իշխան, քո ժամանակն էլ է վատ եղանակ լինում, անձրև է գալի, ցեխ է լինում, մարդիկը նեղանում են. ծառերին դուն էլ պակաս վնաս չես տալի կարկտով, ես չունիմ մեղք, եթէ երկիրն և բնակիչներն ինձանից անընդհակառակ են, ես իմ պարտքս վճարել եմ առաջուց լսնոց տալով իմ գալս ։ Մինչեւ Թէ իմ իշխանութեան ժամանակին երկրագործներն ու պարտիզպաններն անզգիծ պիտի մնան, Թէ ձիւն ու ձմեռն է, ահա ամէն քաղաքում արհեստաւորներն իրանց գործն են անում, բայց երկրագործներն ու պարտիզպաններն ծուլանում են, ահա Դեկտեմբեր քաղաքական ժամանակումն՝ Թէպէտ օրերը շատ կարճ են և ցուրան ու սառուցը արգելք կը լինին երկրագործելին, բայց դարբի գործքի տեղն, տնական գործքեր կարեն շինել, և հարկաւոր է կենդանեաց հոգսը քաշել, ոտքերի տակն շատ գարման փռել, որչափ կարելի է տաք ու չոր պահել ախտը, բայց այն հինների ախտն, որ բոլոր ձմեռն պիտի քանեցնեն չէ պէտք շատ տաք պահել։ Ինչ-նելու կռվերի վրայ մեծ հոգս ունենալ, ոչխարի ծնելու ժամանակը որչափ որ մոտանայ, այնչափ աւելի լաւ կերակուր տալ։ Հաւանոցները երբ ձիւնով ու սառուցով կը ծածկվին, պէտք է ներսը ծածկած ամանով տաք ջուր դնել, որ ցրտին չը կոտրվին։

Երկրագործը քաղցը օրի ժամանակը պիտի մոիկ տայ, որ արտերի հողն մէջ լմի ցեխ ու կաւ խառնէ, չոր ու մամուռ պատած հողերի վրայ վարշ գարձած կերը վռնելու է, կաւոտ հողերը վարել, փոսերն ու ջրանցքները բաց անել, և աշխատի մոիկ տալու, որ ջրերը ՀՀ կողմն վրայ լմի չգառնան։

Զմեռնամուտ ընելը այս ամսի մէջ քաղելու է, որովհետև Թէ որ մինչեւ գարունը ծագի վրայ մնան, ձէթը լաւ չի լինի։

Ոչխարի պահօրն պիտի մոիկ տայ, որ բոյսերը ցրտից պահպանէ, և Թէ ջուր պէտք լինի տալու՝ տաք ջրերումը տայ։

Յանվար զորապետաց ժամանակն հրամայեցի, որ երկրագործներն պատրաստեն հնձելիքները, Թէ որ ժամանակը ձեռք տայ, կարող են կարկուղ հողը վարել, ցանքերը դրատել, Թումփերը կարսել, ու մամռուների հանելու ժամանակն այս է, նամանաւանդ ձըղնեքի վրայ ԹրԹռուների լսնը հիմի պիտի քանդեն, Յարդեն, որ գարունքին չշատանան։

Ոչխարի մեծայոզ պարտիզպանն պիտի մոիկ տայ, որ վանկարանների մէջ բոյսերը չը ուռչին, նրա համար ժամանակ ժամանակ հարկաւոր է կրակ վառել, ու գրսի ցրտութեանը համեմատ՝ տաքութիւնը աւելցնել ։ Իսկ Գնտրվոր զորապետաց ժամանակը արեը սկսում է բարձրանալ, ու օդը տաքանալ, բայց շատ անգամ գետնի երեսը ձնով ծածկած կը լինի։ Ինչ որ բաց տեղը աշխատելու ժամանակ լինի, պէտք է գարի ու գարնան ցորեն ցանելու հողերն վարել։

Պարտիզպանն էլ պէտք է, որ շուտ հասնող տերմն ցանի, հողը վարելին յետոյ հարաւային կողմի ելած պատերի տակը ցանելու է ոլոռն (գիւլըլ) բակլայ, սոխ, սխտոր, պրաս ու կաղամբ, գետնախնձոր անկել, հողն կշտաք լաւ մաքրելու է։ Պատրաս անելու ծառերն հիմիկուց կարելու է և առնն տեսակ բոյս կարելի է անկել, մանաւանդ Թաց հողի մէջ։ Բայց մարդիկ ձիւն ու ցուրտ կաւ ատելով, մնան անելքը ու փակեցին դռնները ։ Ինչ մեղաւոր եմ, որ ամէնից չէ առաջին անդամ պատահած, որ անտուելը լինի, ահա Ամառ Իշխանը, որոյ ժամանակը ամենայն բարութեամբ լիքն է, ձայն է տալիս Թէ Ով ա՛, այսինքն տարեկանդ ա՛ռ, տաքուդ պատրաստութիւնդ առ, ըստ որում Ձմեռն առաջդ է, բայց նրանք դանդաղում են, օրէց օր են գյուղ, մինչև որ ձիւնը կոխում է գնելը, և յետոյ տրանջում են ձանձից, ես ի՞նչ անեմ, որ շատերն խուլ լինին ու չլսմանան ։ Ախորժակ անտարբերութեամբ և դանդաղսատութեամբ գռեհիկ մարդկանցից Հարակատը էլայ, կամեցայ կռիւ բաց անել նրանց հետ, աւելցնելով ցրտութիւնը և ցեխը, ուստի ուղարկեցի Ամառ զորապետին, որ հետաքննեցնէ նրանց և տեսնէ պատրաստել իւր ժամանակին տարեկան պաշարը, հաց, փայտ, ածուխ, բայց Ամառն օր է որ գնացել է և այս օր ապատամբել է ինձանից ու քո կողմն է անցել ։ Բայց գուշ Իշխան Գաբրան, դիտացիր, որ եդ զորապետ Ամառը, որ կռիւ է նշանակում, քեզ էլ հաւատարիմ չի լինի, և շատ ա-

դերաւելիններէ կանչէ, քեզանից էլ կ'ապատամբվի, եթէ խելք ունիս և իմ բարեկամութիւնն կ'ուզես, բռնիր դրան և կռնեկն կապած ուղարկիր ինձ մօտ։

Դարուն հշմանն ամենևին ականջ չդրեց այս պատգամիս, այլ պատասխան տուաւ քաջութեամբ. Թէ մէք երկու-քս 'ի միասին հշմանութիւն անել չենք կարող, կամ խաղաղութեամբ գնա դուրս և կամ պատերազմի, իսկ Մարտի հանաը որ ասում ես Թէ քեզանից ապրսատմբել է, միաքդ բեր, որ Դեկտեմբերը զօրապետին Ընձեան իշխանին ապստամբեցրիը, և քո կողմդ դնելիը, ուրեմն մի' նեղանար այդ բանի համար. Թէ Մարտն իմ կողմն է անցել, որովհետև ցանածդ հնձում ես։

Այս դէպանութիւնն ուշնչ քաջ չարաւ մէկին կամ միւսին, երկուսն էլ աչքը բռնել էին միևնակ իշխելու վրայ, բայ էլաւ արիւնահեղ պատերազմ։ Ընձեանին իրան տաքսութենով վախցրուց յրսին և հալեցրուց ձիւնը, բայ վիցան լեռներն գլուխներն և փեշերքն։ Յամաքեցաւ ցեխը, հալվեցան ջրերն սառուցներն և ձորերն ու դաշտերն մէջ առու ըները լոխոջալով ու քարերն հետ ծաւի տալով գընում էին։ ամենայն բնութիւն ստացաւ իւր Ընտուածատուր կենդանութիւնն և եթէ Ձմեռան ջրքիյը մէկ քանի ամսացած կայլին ամպերը վերևից գուռգուռալով, կայծակներ թափելով վախցրին, և անձրև ածելով մաքրեցին բոլոր աշխարհքը, և այն բռնաւոր իշխանութիւնը վերջացրին, քանի որ իրանց իշխանութիւնն հատատ էր։

Յանկարծ բայ արի աչքս տեսայ նոր բան, նոր աշխարհ, նոր կեանք, նոր ուրախութիւն, բայ արի պատահանները, բայ արի դունեղն, որ մինչև էն ժամանակը փակած էին, որ բերանի հալ չը մնին, առայ ձեռս գաղան և գնացի դէպ 'ի անտառն և տեսայ հեռուանց մէկ երիտասարդ քան կամ քանեհինգ տարեկան բոլորվին անծանօթ յանկարծ վախեցայ, չը լինի Թէ գահ չէ բուբն լինի, բայց երբ մօտ կացայ նկատեցի նրա գեղեցիկ կերպարանքը, ուրախացաւ սիրտս, ձեռքին ունէր փունջ վունջ կապած ծաղիկներ, որ դեռ կոկոնի մէջ էին, և պլուխն կանաչներով զարդարված։

Այս անծանօթ երիտասարդը պատահեցաւ ինձ անտառումն, ինչպէս պատուական և քաղցրահամ ազգիւրների ջրերը վազելով քարերի վրայ, արծաթի նման էին երևում, հոգիս փառաւորվում էր, կեանքս զուարճանում էր, աչքերիս լոյսը աւելնում էր, ձմռվայ շունչը բոլորվին կորվել էր, հասկանում Թէ հետքը չէր երևում, կանաչ խոտը փաթը ինչ մեծացել էր ու գետնի երեսը մանուր էր շինել, գառները ծաղկոտ տեղերումն արածում էին, մայում էին, ես էլ կանգնած մնիկ էի տալիս, հովիւն կանաչ Թփերի վրայ Թինկը առած Թուխակ էր ածում, նրա քաղցր ձայնին ականջ դնելով զմայլում էի, նստեցայ մէկ աղբիւրի մօտ, այս տեղ էր գեղեցիկ տեսարանը. Ընտուծոյ արարչագործութեան երրորդ, չորրորդ, հինգերորդ և վեցերորդ օրերի մէկ մասն աչքիս առաջին էի տեսանում և ծնացածն էլ նկատագրում էի, երկիրն բոլոր բանջարները բուսցրել էր, պտղատու և անպտուղ ծառերն կանաչած, պտղի աչքը տուել էին, ծաղիկների կոկոնները դուրս էին եկել, արեգակն նոր էր զարթել քնեն և առագաստն դուրս գալով ոսկեների վրայ ձեմելով և ոսկենման ճառագայթը սփռելով անտառի ծառերի գլխին, տերևների վրայ նստած գիշերվան յօղը մարգարտի հատիկների պէս փայլում էին, հովու զով քամին մէկ կողմից հանդարտ փչելով տերևներին խշշացնելով յօղը մարգարտի պէս թափում էր գետնի կանաչ մախմուրի վրայ, Թռչունքներն նստած ծառերի ճղքներքին և Թփերի գլխին անոյշ երգելով՝ զմայլեցնում էին սիրտս, որ անցկացած ձմռվայ նեղութիւնն ամենևին միաքս չէր գալի, անտառների արտ անելը աստուածապատասխան նրանց համար կերակուր խոտերի և ծաղիկների, միաքս առ Ընտուած էր փոխվում, և ես որպէս մարդ ստեղծուած վեցերորդ օրումը, տեսնելով այս ամէն բնութեանքը, զարթում էր միաքս, սիրտս և հոգիս փառաւորել Ընտուծոյ ամենակարող գործութիւնը և աքանչելիքը և միաք ածել, Թէ նա է որ տալիս է գործութիւն և շունչ ամենայն արարածոց. նա է, որ պահպանում է ամենին ձմռվայ ցրտի և բքի ձեռից, վասն որոյ կանգնեցուլ աղբիւրի մօտ, բայ արի գլուխս, տարածեցի ձեռքս դէպի երկինքը, փառաւորեցի զ Ընտուած ասելով։

Ով իմ Ընարիչ քեզ լինչ ընծայեմ.
Ինչ կայք որ ունիմ բոլորն էլ քոյ են.
Այս առաւօտիս, քեզնից լինչ խնդրեմ.
Աբուր սիրտ հոգի տալ լինձ աղաչեմ.
Ես անարժան եմ չկարեմ խօսիլ.
Ամենակալիդ գործքերը պատմել.
Ով են մեղաւորքն, որ համարձակվին
Մեղաւոր բերնով Քո Ընտանդ յիշեին։
Բայց Դուն ատոցիդ գարձարուն առիս,
Ես գառնամ առ քեզ և գուս գարձ առիս.
Աբերեա իմ հոգի, սիրտ, միտք և մարմին.
Որ փառաւորել Քեզ կարող լինին։
Եղուկս Թաղ խօսիլ այս առաւօտին,
Պատմել Քո սուրբ գործքդ և արանչելին,
Կանգնած եմ ահա այս սառն աղբիւրին.
Ականջ եմ դնում Թռչնոց ձայներին։
Օ արեթիր ով աշխարհ, զարթիր աղաչեմ,
Օ արեթիր, ով քնիր քեզ նոր բան պատմեմ,
Օ արեթիր, տես լինչ են գործք քո Ընարչին.
Օ արեթիր ու լաւ տես Ընդատաւոր բարին։
Ընդկացաւ ձմեռն, անցկացաւ ցուրտ, բուք,
Ընդկացաւ որսից անվախթար սուգ.
Երկիրը անշէն, արդ շէն կ գարձել.
Լեռներ, անտառներ ու դաշտեր ծաղկել։
Ելաւ մեզ հատաւ Լշխանն Դարուն.
Բերաւ իրան հետ ծաղիկներ սիրուն.
Ծառերին տաւաւ տղի, կեանք, արիւն.
Ծաղկով, խոտերով, լցրեց դաշտերուն։
Ուռաւա եղաւ, արեգակ ծագեց,
Մեծ ճառագայթիւ աշխարհք փայլեցրեց
Ընտուծոյ մերոյ գործքերը բացեց.
Ընտագնեցրին հոգւով ցնծայրեց։
Բոլոր աշխարհքն ահա խնդում է,
Ծառքնին, անտառն, գաշտն ցնծում է,
Ընշխնչ արարածն հետ միանում է.
Ընտուծոյ անունն փառաւորում է։
Քամին քաղցրաշունչ հիմիկ է փչում։

Ակնի պես ջրերը լեռներից վազում.
Ծառերը լրիր այժմ են ողջունում.
Թռչուններն ղՈւռուած են փառաւորում.
Տես թէ երկիրն ինչպէս ցնծացաւ,
Երբ գարունն եկաւ, նա մանուկ դարձաւ.
Ծոփ ծաղիկ տալով որդուցն է կանչում.
Ուռուճուն օրհնել է հրաւիրում:
Արձ են գործք քո Տէր, լոր են խորհուրդք քո,
Ընչաւի պարգևես բարութիւնդ մարդոյ,
Ընձրև, արեգակն անհնայ ես ընորհում.
Խարոյ և ջուրն ածում և ծագում:
Ընթաքծներին մոխիկ եմ տալիս,
Քո կարողութիւնդ յայտնի երևին.
Ուսում եմ փառք Քեզ անմահ Թագաւոր
Ամեն պարգևացդ անթիւ, բիւրաւոր:

Հարունակելի.

Պ. Ա. Լեոնիք Յովհաննէսեանց գործակալ Տպարանի ք. բաժանման Դիւանատան ՆԱՐԻՆ ԿԱՑԱՐԱՆԱՆ ՄԵՆՈՒԹԵԱՆ, կայսերական Շեմախոյ Վիտութեանց և Շեմախոյ Հոգևորանց պատիւ հաճելի ծանուցանել ուսումնասէր հասարակութեան Հայոց, թէ գրատուն նորա այս օրերս ստացաւ 'ի Պօլսոյ, 'ի Վենետիկ, 'ի Մոսկուա և 'ի փարիզոյ շատ զանազան նորատիպ գրեանք հայերէն, գաղղերէն և ռուսերէն լեզուաւ, որոց մի մասին ցուցակն այժմ հրատարակվում է աստ, և ճշդելոյն կը հրատարակուի հետ ղհետէ, Յանկացողքն ունենալու այս գրերիցը կարող են ուղղակի թղթակցել առ Պ. Յովհաննէսեանցն և առանձնաձայն ուղեցոյցն առանց ուշանալու և միշտ ծախքն առնուղի վերայ հաշուելով:

1. Աբելեայ փիլիքոս Իտալացի եմմասնոյն բարոյական խրատք յաշադս մարդկային պարտուց, Վենետիկ 'ի 1854 ամի, 1 մանէթ արծաթ:
2. Սաղոմոնի Յաւնն Վէպտզրի պատմութիւն դաւակցութեանն Կատիլինեայ և պատերազմին Յուգուրթայ, Վենետիկ. 1856 ամի, 1 ման. 50 կոպէկ:
3. Արդուեստութիւն կամ Օրէնք բարեկիրթ կենցաղավարութեան 'ի հրահանգ մանկտւոյն յաշխարհիկ բարբառ 'ի պէտս դպրոցաց. Վենետիկ. 1856 ամի, 1 ման. 20 կոպ:
4. Պատմութիւն մատենադրութեան Յունաց և Հռոմայեցւոց 'ի ծագմանէ անտի գպրութեան 'ի նոսա, հանդերձ սրբազան մատենադրութ նոցին, յաշխարհիկ բարբառ 'ի պէտս աշակերտելոց գեղեցիկ դպրութեանց, Վենետիկ. 1857 ամի, 2 ման. 80 կոպ:
5. Համառօտ պատասխանիք առ յանխախեալ առարկութիւնն ընդդէմ կրօնիցդ յաշխարհիկ բարբառ, Վենետիկ. 1857 ամի, 1 ման. 60 կոպ:
6. Հայոց Երգք ռամկականք յեղեալք յանգլերէն բարբառ հանդերձ հայերէն բնագրաւն, Վենետիկ. 1853 ամի, 1 ման. 50 կոպ:
7. Փըրիանու գաղղիացւոյ Լուսաւ Պոմպիլիոս, որ է քերթուածիւն յայնմակ խօսս, զոր և նորոգ Թարգմանեաց արհեստասիրաց տէր Յ. Երդուարդ Հիւրմիւզեան Արքեպիսկոպոս Շէքակայ. Վենետիկ, 1855 ամի, 2 ման. 50 կոպ:
8. Վարք սրբոյ Հարանց անապատաւորք Ձիմաւորաց կրօնից Թարգմանութեամբ նախնեաց, և կարգք նոցին մատենագրութեանց' 2 հատոր, Վենետիկ, 1853 ամի, 10 ման:
9. Փետրոսի Յաւնին քերթողի առակք նորոգ տպագրութեամբ. Վենետիկ. 1856 ամի, 3 ման:
10. Հնախօսութիւն Հայոց համառօտ աշխարհաբար հարց. պատասխ. 'ի պէտս դպրոցաց. Վենետիկ. 1856 ամի. 2 ման. 50 կոպ:
11. Թուաբանութիւն կամ Համարողութիւն նոր' աշխարհաբար. Վենետիկ. 1856 ամի, 2 ման. 20 կ:
12. Տնտեսութիւն մարդկային կենաց խրատք ալիտանիք յեղեալք 'ի Վենեցւոյ լեզուէ յանգլիական բարբառ, յորմէ 'ի մերս Թարգմանեաց Գէորգ Ա. Օտաբեան. Վենետիկ. 1856 ամի, 1 ման:
13. Հաւաքումն ընտիր քարոզից 'ի գաղղիացի և յիտալացի քարոզչաց Թարգմանեալ 'ի մերս վոխեալ. Վենետիկ. 1851 ամի, 5 ման. 50 կոպ:
14. Համաբարբառ կամ Յանկ նամանաձայն բառից նորոյ Կտակարանի այբբենական կարգաւ շարադասեալ. Ո. Միւռնիա 1848 ամի, 2 ման:
15. Հաւաքումն վկայութեանց տուեալ Գրոց 'ի Ո. Միւռնիա 'ի 1856 ամի, 1 ման. 50 կոպ:
16. Ա. բուեսա ուղիղ խորհելոյ և բարւոք կեցոյ և սիրելի բանիք բարոյականին, Վենետիկ. 1857 ամի, 1 ման:
17. Պլեթոպէի գաղղիացւոյ վկպասանութիւն 'ի Յովսէի գեղեցիկ. Վենետիկ. 1857 ամի, 1 ման. 50 կ:
18. Հովիւ հոգևոր կամ կարևոր հրահանգք 'ի պէտս հաւատացելոց. 2 հատոր. Վենետ. 1857 ամի, 3 մ. 50 կոպ:
19. Տրամաբանութիւն նոր աշխարհիկ բարբառ 'ի պէտս ազգային վարժարանաց, յօրինեալ Թովմայ Թորոնի, 1857 ամի, 1 ման. 50 կոպ:
20. Տարեգք ժամակարգութեան. Վենետիկ 1857 ամի, 80 կոպ:
21. Աշխարհագրութիւն նոր, հին և նոր Հայաստանեաց աշխարհաբար. Վենետ. 1857 ամի, 2 ման. 50 կոպէկ:

Печатать позволяется

Тифлисъ. Августа 16-го 1858 года. Цензоръ И. Кайтмазовъ.

Խմբագրիչ Սեբէոս Վրդ. Պետրոսեան:

'ի Տպարանի Ներսիսեան Հոգևոր Վարժոցի Հայոց ընծայելով Ա. Ազնուական Ազգ Գէորգայ Ա. Ծերունեայ,

ԹԻՖԼԻՍ.